ԼՐԱՏՈՒ

ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կյանքի 79-րդ տարում վախճանվեց անվանի թատերագետ-գրականագետ, մշակութային գործի հմուտ կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Հովհաննեսի Հախվերդյանը:

Իր ավելի քան կեսդարյա գործունեության հարուստ արդյունքներով ու վառ անհատականության դրսևորումներով Լ.Հախվերդյանը պատվավոր տեղ է գրավել XXդ. երկրորդ կեսի մեր մտավորականության մեծերի շարքում: Մերձավորություն ունենալով նրանցից շատերի՝ Ավ.Իսահակյանի, Գ.Գեմիրճյանի, Գ.Մահարու, Վ.Աճեմյանի, Պ.Սևակի և այլոց հետ՝ Լ.Հախվերդյանը հավաստել է իր վերաբերմունքը՝ նրանց նվիրված ուսումնասիրություններով, մեծաթիվ հոդվածներով ու ելույթներով, որոնք արժանացել են ո՛չ միայն Հայաստանի, այլև սփյուռքի մեր ազգակիցների բարձր գնահատանքին:

Լևոն Հախվերդյանը մեր իրականության մեջ այն եզակի գիտնականներից է, ում մեջ հավասար իրավունքով մեկտեղվում են բազմապիսի նախասիրություններ: Ասպարեզ մտնելով թատերագետ-քննադատի կրթությամբ՝ Լ.Հախվերդյանը, միաժամանակ, ճանաչելի դարձրեց գրականագետ-քննադատի իր ձիրքն ու հակումը: Բեմական գործիչներին, թատերական գործի այլևայլ բաղադրիչներին նվիրված գրավոր ու բանավոր ուշագրավ ելույթների կողքին հանրությունը հետաքրքրությամբ սկսեց հետևել գրաքննադատ Լ.Հախվերդյանի բանիմաց, համարձակ և լրջմիտ դատումներին՝ գրողների, գրական գործի կարևորագույն խնդիրների մասին նրա գրած հոդվածներին: Այսպես՝ օրգանական ներհյուսումով թատերագետ-գրականագետը դարձավ մեր պատմության թերևս ամենաբարդ մի ժամանակաշրջանի մշակութային տարեգիրն ու մեկնաբանը:

1950-ականի կեսերին, երբ երկրում նոր-նոր սկսվել էր խրուշչովյան «ձնհալը», Լ.Հախվերդյանը մեզանում առաջիններից մեկն էր, որ ծառացավ անկոնֆլիկտ դրամատուրգիայի անհեթեթ տեսության դեմ՝ իր «Մեր օրերի հայ դրամատուրգիան» գրքով, որը իր թեկնածուական թեզն էր, վերահաստատելով կոնֆլիկտի անհրաժեշտության գաղափարը յուրաքանչյուր դրամատիկական երկում:

Հաջորդ տասնամյակում «Գրական թերթի», «Սովետական արվեստ» ամսագրի խմբագրություններում և Պետհրատում աշխատելու ընթացքում ձեռք բերած փորձով հարստացած Լ.Հախվերդյանը տեղափոխվում է ԳԱԱ Արվեստի ինստիտուտ՝ սկզբում իբրև գիտաշխատող, ապա՝ թատերական բաժնի վարիչ: Նա այլոց հեղինակակցությամբ 1967թ. հրապարակ է հանում «Սովետական հայ թատրոնի պատմությունը» խորագրով կապիտալ աշխատությունը (հեղինակներ՝ Լ.Հախվերդյան, Ս.Ռիզան, Բ.Հարությունյան, Խ.Ավագյան, Լ.Խալաթյան): Դրան զուգահեռ, նա հրատարակում է «Կլասիկան և մեր օրերը», «Վարդան Աճեմյանի արվեստը», ապա նաև «Հայ թատրոնի պատմությունը 1901-1920թթ.» մենագրությունները: Թե՛ մեկը և թե՛ մյուսը գնահատվեցին իբրև նոր խոսք մեր

թատերագիտության մեջ: Սրանցից առաջինն ամենից ծավալուն ուսումնասիրությունն է մեր բեմագրական արվեստի մասին, որին կարող են դիմել հայ թատրոնի ապագա գործիչները՝ իմանալու, թե անվանի բեմագրիչ Վարգան Աճեմյանն ինչպիսի արդիական շունչ է տվել հայ դասականներ Հ.Պարոնյանի, Գ.Սունդուկյանի, Ա.Շիրվանզադեի, Վրթ.Փափազյանի երկերին:

Հայ թատրոնի պատմության նշանակալից շրջաններից են 1901-1920 թվականները՝ ականավոր դրամատուրգներ Ալ.Շիրվանզադեի, Լ.Շանթի, Վրթ.Փափազյանի, անվանի դերասաններ Սիրանույշի, Հովհ.Աբելյանի, Հովհ. Զարիֆյանի, Վ.Փափազյանի ստեղծագործելու ամենաբեղուն ժամանակները: Լ.Հախվերդյանը նորովի է դիտարկել ու ներկայացրել ինչպես նրանց, այնպես էլ այդ բարդ ու ոչ միշտ ստույգ բնութագրված ժամանակաշրջանի պատկերը, մասնավորապես «դեկադանս» հորջորջված երևույթի ոչ միանշանակ բնույթը: «Հայ թատրոնի պատմությունը» արժանացավ պետական մրցանակի:

Հենց այդ տարիների ընթացքում էլ Լ.Հախվերդյանը շարունակեց և ավարտին հասցրեց Հովհ.Թումանյանի՝ վաղուց ի վեր իրեն զբաղեցնող ստեղծագործության ուսումնասիրությունը և 1966-ին լույս ընծայեց «Թումանյանի աշխարհը» խորագրով ծավալուն աշխատությունը (իր դոկտորականի ատենախոսությունը): Սա, թերևս, հեղինակի առավել ակնառու ներդրումն էր մեր գրականության մեջ, որը մի նոր հայացք է առաջադրում Թումանյանի անձի ու ստեղծագործության հանդեպ: Հ.Մաթևոսյանի բնութագրմամբ, «...Լևոն Հախվերդյանը մեզ համար գրել է մենագրություններից դժվարագույնը: Թումանյանը մեր մանկությունն է, իսկ մանկության տարիներին սովորած բառերը չեն ստուգաբանվում: Հախվերդյանը, ահա՛, ստուգաբանել է հայացքի ու ընկալման զարմանալի թարմությամբ»:

Պ.Սևակի հետ ունեցած տարիների մտերմությունը Լ.Հախվերդյանին դրդել է ստեղծելու «Պարույրը» վերնագրով խոհագրությունը: Սա հուշագրություն է՝ նվիրված բանաստեղծի՝ վերին աստիճանի վառ ու հախուռն բնավորությանը, նրա բազմաբնույթ ստեղծագործությանը՝ գրված անկեղծ ոգեշնչումով, ստուգապատում գրչով: Գիրքը լույս է տեսել երեք հրատարակությամբ, առաջինը՝ 1981թ., Երևանում երկրորդն ու երրորդը՝ 1987 և 1997թթ., Երևանում: «Ոչ մեկ տեղ, - գրել է Անդրանիկ Մառուկյանը, - Պարույրը այնպես հարազատ ու կենդանի չէ, ապրող ու շնչող, որքան Լևոն Հախվերդյանի այս գրքին մեջ... Ով որ ուզե տեսնել ամբողջական Պարույրը իր իսկությանը մեջ, պիտի դառնա այս գրքին...»:

Լ.Հախվերդյանի ստեղծագործություններից և ոչ մեկը չի ունեցել այնպիսի ընդհանրացված ճակատագիր, որպիսին ունեցել է նրա «Զրույցներ լեզվի մասին» խորագրով գիրքը: Այստեղ ի մի են բերվել թատերագետ-գրականագետի՝ հայերեն շարադրելու բազմամյա փորձը, թատրոններում հնչող բանավոր հայերենի ունկնդրի, և վերջապես, վաստակաշատ թարգմանչի փորձը: Լ.Հախվերդյանը թարգմանել և երեք անգամ հրատարակել է «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները», Ստեֆան Ցվայգի «Մարդկության աստեղային ժամերը»: «Զրույցներ լեզվի մասին» աշխատությունը Լ.Հախվերդյանի ներդրումն է կիրառական լեզվաբանության մեջ և մեծապես նպաստում է մայրենի լեզվի յուրացմանը, հայերեն գրավոր, առավել ևս բանավոր խոսքը հյուսելու դժվարին արվեստին: Եվ հենց դրանով էլ այս գիրքը դասագիրք է հայերեն խոսող ու գրող բոլոր տարիքի մարդկանց համար:

Լ.Հախվերդյանն ուներ սևեռուն նպատակադրում՝ գրել պարզ, մատչելի ու գրավիչ, այնպես, որ գիրքը և ամեն մի գրվածք գեղագիտական հաճույք պատճառեն ընթերցողին, ոճով, ձևով ու կառուցվածքով հրապուրեն նրան:

Լ.Հախվերդյանի ավելի քան կեսդարյա գործունեության պատկերն ամբողջացնելու համար հարկ է աչքի առաջ ունենալ նրա մանկավարժական և

վարչական աշխատանքը ևս: 1980 թվականից նա Գեղարվեստա-թատերական ինստիտուտի սիրված ու գնահատված դասախոսներից էր: Միշտ եղել է մի շարք ստեղծագործական միությունների, բազմաթիվ խորհուրդների ու հանձնաժողովների կազմում: 1987թ. Լ.Հախվերդյանը ընտրվում է ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն և մինչև իր կյանքի վերջը իրեն հատուկ պարտաճանաչությամբ և ուղղամտությամբ վարում է այդ պաշտոնը ամենաբարդ ու սուղ պայմաններում:

1988թ. փետրվարին Լևոն Հախվերդյանը հանդես է գալիս «Արվեստի ինստիտուտի այսօրվա վիճակը և անելիքները վերակառուցման ճանապարհին» ընդարձակ զեկուցումով՝ ներկայացնելով հայ արվեստաբանության զարգացման մի լայն ծրագիր: Անհանգիստ բնավորության տեր, ազգային ու քաղաքական հարցերում հստակ դիրքորոշում ունեցող գիտնականը լայնորեն ճանաչված ու գնահատված էր ո՛չ միայն մեզանում, այլև սփյուռքում: Նա բազմապիսի բանախոսություններով հանդես է եկել նաև սփյուռքի հայ կրթական ու մշակութային օջախներում (Կալկաթա, Բեյրութ, Հալեպ, Կահիրե, Մոնրեալ, Միլան, Լոս Անջելես, Բոստոն, Նյու-Յորք և այլն):

Լևոն Հախվերդյանը, լինելով ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, երբեք չի եղել կաբինետային մտավորական: Խառնվածքի թելադրանքով նա միջամուխ է եղել նաև երկրի քաղաքական կյանքին, հատկապես վերջին տասնամյակի ընթացքում, երբ հայ իրականությունը ենթարկվեց մի շարք ծանր փորձությունների, երբ ժողովուրդը զգում էր մտավորականության խոսքի ու միջամտության կարիքը: Հենց այդ օրերին Լ.Հախվերդյանը հանդես եկավ հրապարակախոսական հոդվածներով՝ արծարծելով կենսական կարևորություն ունեցող մի շարք խնդիրներ:

Գիտական և հասարակական գործունեության այս համադրությունն է, որ մեզ համար պարզում է Լևոն Հախվերդյանի դիմագիծը՝ իբրև գրականության և արվեստի մեծ նվիրյալի, իբրև ամենքի կողմից սիրված հայ գիտնականի նկարագիրը:

Խորին հարգանք նրա անմոռաց հիշատակին:

ՍԱՄՎԵԼՅԱՆ Խ.Ե.
Բանասիրական գիտությունների թեկնածու